

ՖՈՒՔՍԻ ՈՒՎԵԱԼ ՍԻՆՆԵՐՈՄԻ ԶՈՒԳԱԿՑՈՒՄԸ ԲԵՆՉԵՏԻ ՀԻՎԱՆՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՄԱԼԱՅԱՆ Ա.Ս.^{1,2}, ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Ա.Վ.², ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ս.Ս.²

¹ Երևանի Ս. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ակնաբուժության ամբիոն, Երևան, Հայաստան

² Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 21/12/2012թ., ընդունված է՝ 25/11/2013թ.

Ֆուքսի ուվեալ սինդրոմին բնորոշ կլինիկական նշաններն են՝ եղջրաթաղանթի Էնդոթելի վրա տարածուն բաշխված աստղաձև պրեցիպիտատները, ծիածանաթաղանթի առաջային թերթիկի ատրոֆիան՝ հատկապես պերիպուլպիյար շրջանում (հետերոքրոմիա), հետին սինեխիաների բացակայությունը, հետին սուբկապսուլյար կատարակտի զարգացումը և Ամսլերի սինկտոմը (ներակնային ճնշման կտրուկ անկման դեպքում առաջային խցիկի անկյունից թելանման արյունազեղում) (պարացենտեզ, կատարակտի և գլաուկոմայի վիրահատություն, գոնիոսկոպիա, ապլանացիոն տոնոմետրիա):

Ըստ մի շարք ուսումնասիրությունների արդյունքների, ֆուքսի ուվեալ սինդրոմը կազմում է բոլոր ուվեիտների 1,2-4,5 %-ը: Հիվանդությունը չունի ռասայական և սեռային պատկանելիություն: 7,8-10 %-ի դեպքում ֆուքսի ուվեալ սինդրոմն ունի բիլատերալ դրսևորում: Գլաուկոմա նկարագրվել է ֆուքսի ուվեալ սինդրոմով հիվանդների ավելի քան 59 %-ի մոտ և հանդիսանում է վերոհիշյալ հիվանդների տեսողության անվերադարձ կորստի հիմնական պատճառը: Որոշ հիվանդների մոտ հայտնաբերվում են փոքր ժելատինային հանգույցներ՝ բբի եզրով (Koeppe-ի հանգույցներ) կամ ծիածանաթաղանթի մակերեսին (Busacca-ի հանգույցներ):

Ֆուքսի ուվեալ սինդրոմը կարող է ունենալ ատիպիկ կլինիկական դրսևորում: Գրականության մեջ նկարագրված են նրա զուգակցումներն՝ ակնային տոքսոպլազմոզի, սարկոիդոզի և ցանցաթաղանթի պիգմենտային դիստրոֆիայի հետ:

Ֆուքսի ուվեալ սինդրոմով հիվանդների մոտ բացահայտվել են նաև ռեցիդիվող ենթակոնյունկտիվային արյունազեղումներ և ծիածանաթաղանթի բյուրեղներ (Ռասսելի մարմիններ, որոնք իրենցից ներկայացնում են իմունոգլոբուլինի կուտակումներ՝ պլազմայի բջիջներում):

Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի աչքի բորբոքային հիվանդությունների բաժանմունքում հետազոտված 44 ֆուքսի ուվեալ սինդրոմով հիվանդներից մեկի մոտ հիվանդությունն ունեցել է ատիպիկ կլինիկական դրսևորում՝ զուգակցված Բեխչետի հիվանդությամբ: Վերոհիշյալ զուգակցումն առ այսօր նկարագրված չէ գրականության մեջ: Ըստ H. Saraux-ի և համահեղինակների (1985 թ.), տոքսոպլազմոզի հետ զուգակցման դեպքում ֆուքսի ուվեալ սինդրոմն իրենից ներկայացնում է աուտոիմուն ռեակցիա՝ ուղղված T. gondii ինֆեկցիայով սենսիբիլիզացված ցանցաթաղանթի անտիգենի դեմ:

Մենք ենթադրում ենք, որ Բեխչետի հիվանդության հետ ֆուքսի ուվեալ սինդրոմի զուգակցման պատճառը նույնպես կապված է իմուն պատասխանի որոշակի ձևի հետ:

Վերոհիշյալ զուգակցումը բացատրելու համար հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտություն կա, այդ թվում նաև՝ գենետիկական, հաշվի առնելով հայկական պոպուլյացիայում ֆուքսի ուվեալ սինդրոմի լայն տարածումը: